ԱՐՇԱԿ ԱԴԱՄՅԱՆ

(Ծննդյան 100-ամյակի առիթով)

Լրացավ սովետական էսթետիկական գիտության ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ հայկական և համամիութենական մշակույթի խոշոր գործիչ Արշակ Աբգարի Ադամյանի ծննդյան 100-ամյակը։ Բացառիկ բազմակողմանի օժտված մի անձնավորություն լինելով, Ա. Ադամյանը ոչ միայն հայտնի էսթետ էր, այլև դաշնակահար, երգահան, դիրիժոր, երաժշտագետ։

Ա. Ադամյանը ծնվել է 1884 թ. մայիսի 5-ին, Բաքվում։

Ավարտելով Բաքվի գիմնազիան և ապա՝ Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և ստանալով հիմնավոր երաժշտական կրթություն, Ա. Ադամյանը, սկսած 1921 թ. իր ուշադրությունն ու ջանքերը ամբողջապես կենտրոնացնում է երաժշտական-հասարակական, մանկավարժական և գիտական գործունեության վրա։

1921 թ. մինչև 1924 թ. նա ղեկավարում է Թիֆլիսի Հայ արվեստի տան («Հայարտուն») երաժշտական մասնաճյուղը, իսկ 1924 թ. մինչև 1926 թ.՝ Երևանի պետական կոնսերվատորիան։ Այդ տարիներին նա իր անմիջական վարչական և դասախոսական պարտականություններից բացի, Ալ. Սպենդիարյանի հետ միասին մեծ աշխատանք է կատարում Հայաստանում առաջին սիմֆոնիկ նվագախմբի ստեղծման ուղղությամբ։

1936 թ. Ա. Ադամյանը հրավիրվում է Լենինգրադ՝ Թատրոնի և երաժշտության ինստիտուտ, որպես գիտական քարտուղար, իսկ մեկ տարի անց՝ Լենինգրադի պետական կոնսերվատորիա էսթետիկական ուսմունքների պատմության դասընթացը վարելու համար և ապա նշանակվում նույն կոնսերվատորիայի պատմատեսական ֆակուլտետի դեկան։

1943 թ. մինչև իր կյանքի վերջը Ա. Ադամյանը ապրում ու գործում է Երևանում՝ աշխատելով իբրև էսթետիկայի դասախոս Պետական համալսարանում, Պետական կոնսերվատորիայում և Գեղարվեստի ինստիտուտում։ 1944 թ. մինչև 1949 թ. նա աշխատել է նաև Հայաստանի Գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության սեկտորում, ուսումնասիրելով էսթետիկայի տեսության և պատմության հարցերը։ 1945 թ. նրան շնորհվում է ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Ա. Ադամյանը վախճանվեց 1956 թ. փետրվարի 17-ին Երևանում։

Ա. Ադամյանը թողել է գրական մեծ ժառանգություն, որի մի մասը մտել է նրա հրատարակած աշխատությունների երեք ժողովածուների մեջ։ Նրա հրապարակումների

դպրի մասը ցրված է պարբերական մամուլի էջերում։ Շատ հոդվածների և հետազոտություններ մնացել են արխիվներում՝ ձեռագիր վիճակում։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև նրա նամակները արվեստի մասին՝ ուղղված սովետական մշակույթի ականավոր մի շարք գործիչների։

Էսթետիկայի և էսթետիկական ուսմունքների (այդ թվում և միջնադարյան Հայաստանի) պատմությանը նվիրված Ա. Ադամյանի աշխատությունները հսկայական արձագանք գտան ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս։

Ա. Ադամյանի աշխատություններին հատուկ են պրոբլեմների լայնությունը, հարցադրումների խորությունը, ընդարձակ էրուդիցիան, վերլուծական հաղվագյուտ բնդունակությունը, մատերիալիստական դիալեկտիկայի մեթոդի փայլուն տիրապետումը, նրա ստեղծագործական դիրքորոշման օրգանապես ներհատուկ կուսակցականությունը։

Ա. Ադամյանին բնորոշ էր նորարարությունը։ Ասես կանխատեսելով մարքս-լենինյան էսթետիկայի բնագավառում տեսական որոնումների հնարավոր ուղղությունը՝ նա կարողանում էր առաջ անցնել ժամանակից և երբեմն դիմել այնպիսի հարցերի վերլուծությանը, որոնք միայն հետագայում էին էրևան գալիս սովետական էսթետիկական մտքի ուշադրության կենտրոնում։ Դա վերաբերում է, մասնավորապես, արվեստի առարկայի և գեղեցիկի էության հարցերին, որոնց շուրջը, ինչպես հայտնի է, աշխույժ բանավեճեր սկսվեցին միայն 50-ական թվականների վերջին, որոնք, ասենք, մինչև օրս էլ չեն դադարել։

Ադամյանի էսթետիկական աշխատություններն այժմ դարձել են ողջ սովետական էսթետիկայի սեփականությունը։ Նրա բազմակողմանի, վառ և ինքնատիպ գործունեությունը, հիրավի, հսկայական դեր կատարեց հայ և ամբողջ բազմազգ սովետական մշակույթի զարգացման գործում։

Փ. գ. դ., պրոֆ. ՅԱ. Ի. ԽԱՉԻԿՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԱՄՍՈՆՈՎ

(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

Ռաֆայել Միքայելի Սամսոնովը ծնվել է 1926 թ., Հայկական ՍՍՀ Աշտարակ գյուղում։ Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո, 1950 թվականից մինչև օրս կուսակցական ու պետական աշխատանքը նա զուգակցում է գիտական գործունեության հետ։

Ավարտելով ՍՄԿԿ Կենտկոմին կից հասարակական գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան՝ 1960 թ. նա պաշտպանել է դիսերտացիա և ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։ 1960 թ. նրա «Կոլեկտիվիզմի ձևավորումը և ինդիվիդուալիզմի հաղթահարումը» աշխատությունը հրապարակվել է Մոսկվայում, ՍՄԿԿ Կենտկոմին կից հասարակական գիտությունների ակադեմիայի և բարձրագույն կուսակցական դպրոցի հրատարակած «Կոմունիստական դաստիարակության պրոբլեմները» ժողովածուում։ Սույն ժողովածուն 1962 թ. հրատարակվել է իսպաներեն Մոնտևիդեոյում (Ուրուգվայ), իսկ 1964 թ. Ռ. Սամսոնովի նշված աշխատությունն առանձին գրքույկով լույս է տեսել